



# GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Telephone: 818-241-3111 • Fax: 818-548-9041

Մարտի 13, 2020թ.

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի սիրելի աշակերտներ, անձնակազմ, ընտանիքներ և համայնք՝

Ուսումնական խորհուրդը և մեր կրթաշրջանի ղեկավարությունը միտված է ապահովելու Գլենդեյլի կրթաշրջանի ամբողջ համայնքի առողջությունն ու անվտանգությունը: COVID-19-ով պայմանավորված հանրային առողջության ճգնաժամը աննախադեպ է և մենք անկանխատեսելի իրավիճակում ենք գտնվում՝ փորձելով կանխել այս հիվանդության տարածումը: Մենք շարունակում ենք հետևել նահանգային և տեղական առողջապահական և կրթական կառույցներից ստացվող ուղեցույցներին առ այն, թե ինչպես անվտանգ պահենք մեր աշակերտներին և անձնակազմին՝ այս արագ տարածվող իրավիճակի պայմաններում:

Այսօր, Լոս Անջելեսի վարչական տարածքի կրթության բաժանմունքը թույլատրել է փակել Լոս Անջելեսի վարչական տարածքին պատկանող 80 կրթաշրջանները՝ սկսած երկուշաբթի օրվանից, մարտի 16-ից, որպեսզի հնարավոր լինի մեղմացնել COVID-19 հիվանդության տարածումը: Կարևոր է նշել, որ սա Լոս Անջելեսի վարչական տարածքի հանրային առողջապահության բաժանմունքի հրահանգը չէ: Սա Կրթության վարչական շրջանի բաժանմունքի կրթական հանձնարարականն է, որպեսզի հնարավոր լինի խթանել ֆիզիկապես միմյանցից հեռու գտնվելը:

**Մեր աշակերտների առողջության և անվտանգության նկատառումներից ելնելով՝ մենք որոշում ենք կայացրել երկարաձգել դպրոցների գարնանային արձակուրդը լրացուցիչ մեկ շաբաթով, այնուհետև անցում կատարել հեռակա ուսուցման տեսակին՝ մինչև 2020թ. ապրիլի 5-ը: Հետագա երեք շաբաթների համար, մենք ունենք հետևյալ ժամանակացույցը՝**

- **Մարտի 16-20** – Նախատեսված գարնանային արձակուրդ
- **Մարտի 23-27** – Երկարաձգված գարնանային արձակուրդ աշակերտների համար: Ուսուցիչներն ու անձնակազմը կներկայանան իրենց աշխատավայրերը:
- **Մարտի 30-ապրիլի 3** – Աշակերտները կներգրավվեն դպրոցից դուրս հեռակա ուսումնական գործընթացին (հաջորդ շաբաթ լրացուցիչ տեղեկություններ կստանաք ձեր դպրոցից): Ուսուցիչներն ու անձնակազմը կներկայանան իրենց աշխատավայրերը:

**Այս պահին, մենք ակնկալում ենք, որ դասերը կսկսվեն 2020թ. ապրիլի 6-ին: Մենք կվերագնահատենք իրավիճակը առաջիկա շաբաթների ընթացքում և որոշենք, թե արդյոք անհրաժեշտություն կլինի երկարաձգել հեռակա ուսուցման գործընթացը:**

**Վաղ կրթության և արտաժամյա ուսուցման ծրագիր (EEELP)**

Գլենդեյլի կրթաշրջանի վաղ կրթության և արտաժամյա ուսուցման ծրագրի (EEELP) գարնանային արձակուրդի ճամբարը բաց կլինի և կգործի իր սովորական ժամանակացույցով գարնանային արձակուրդի ընթացքում՝ մինչև մարտի 23-ը: Նահանգի կողմից հովանավորվող երեխաների խնամքի ծառայության ծրագիրը կշարունակի գործել գարնանային արձակուրդի ավարտից հետո: Մնացած բոլոր նախադպրոցական, երեխաների խնամքի, դպրոցից առաջ և դպրոցից հետո առաջարկվող ծրագրերը փակ կլինեն մինչև ապրիլի 6-ը:

## **Մենդի ծառայություններ**

Մեր Մենդի ծառայությունների բաժինը (Nutritional Services Department) կշարունակի ճաշ մատակարարել մեր կարիքավոր աշակերտներին՝ զարնանային արձակուրդին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում: Նրանք կարող են անունը վերցնել grab-and-go կոչվող կենտրոններից, որոնք տեղակայված կլինեն մեր մի քանի դպրոցներում՝ սկսած մարտի 24-ից: Շուտով այդ մասին մենք լրացուցիչ տեղեկություններ կուղարկենք մեր ընտանիքներին:

## **Կրթաշրջանի գրասենյակի գործունեությունը**

Կրթաշրջանը կշարունակի գործել իր սովորական ժամանակացույցով, եթե որևէ այլ ցուցում չլինի Լուս Անջելեսի հանրային առողջապահության բաժանմունքի կողմից: Հաջորդ շաբաթ՝ զարնանային արձակուրդի ընթացքում, մեր դպրոցների տարածքները սպասարկող բաժնի անձնակազմը կիրականացնի դպրոցների տարածքների մանրակրկիտ մաքրման համար նախատեսված գործողությունները:

Ես հասկանում եմ, որ սա դժվար, հիասթափեցնող և հնարավոր է նաև վախեցնող ժամանակահատված է մեր աշակերտների, անձնակազմի և ընտանիքների համար: Մենք կշարունակենք նորություններ և օգտակար աղբյուրների հղումներ տրամադրել ձեզ: Խնդրում եմ օգնել մեզ՝ հոգ տանելով ձեր և մյուսների համար զարնանային արձակուրդի ընթացքում: Չնայած այն հանգամանքին, որ մենք պետք է ֆիզիկապես միմյանցից հեռու պահենք մեզ, մենք կարող ենք բարի մի խոսք ասել կամ օգնության ձեռք մեկնել դրա կարիքն ունեցող որևէ մեկին, անգամ եթե դա գուտ հեռախոսազանգ կամ հաղորդագրություն է:

Մենք միտված են ապահովելու մեր Գլենդեյի կրթաշրջանի ամբողջ համայնքի առողջությունն ու անվտանգությունը: Մենք կշարունակենք տրամադրել ձեզ ամենավերջին տեղեկությունները առաջիկա օրերի և շաբաթների ընթացքում: Եվս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում ձեր աջակցության համար:

Հարգանքներով՝



Վիվյեն Էքշյան, Ed.D.

Դպրոցների գերատեսուչ